



17. ՉԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՐՈՒԹՅՈՒՆ

Ժամանակով թուջարըմ կիլնը, ուր լաճ:

Թուջարն էլ շատ գանգյին կիլնը:

Լաճ կըսը. - Կակո՛, իս տ'երթամ թուջութին, դիւ խանըվոր-
ցիր իս, իս տ'երթամ:

Խերն էլ կըսը. - Տըղա՛, տալ տիւ պան չըս գյըտը, ըզքի
տընիմ խա թուջըրքիրուն, գյընա՛:

Կերիզկը, թուջըրքիր կը պիրը:

Կըսը. - Ձիմ լաճ տարեք խիտ, հալա ի՛նչըխ իս ծի սովորը-
ցի, տիւ էլ իմ լաճ սովորըցցեք: Ամանաթ իմ լաճ:

Քըսան բերգյը պեռ մալ կը տա հինը, կըսի. - Դե գյընա՛:

Կիլնին, կը գան, մաչ տաշտին պեռնիր կը թալին:

Գյիշիր կը մընան մորա չուր առավոտվան դեմ, թուջըրքիր
կըլնին վի, կըսին. - Դիր լաճ թըխ ըլնը վիր, մորա պըռնը, առա-
վոտ ը, ալ մարթ չըվախանա, քիչըմ մինք քընցինք:

Լաճն էլ կը ծարվանա, կիլնը, կերթա վար հախպըրին: Ինչ
ճուր կը խըմը, պըռծնը, մեկըմ կը թալը, ճիվ կը պըռնը:

Կըսը. - Տըղա՛, մը՛ վախանա, իս քըռ քանվորն իմ: Առավո-
տուն կելնիս, քիւ մալ չոկ պա՛ռց, գյընա՛ Դիարբաքյոա քաղաք, իս
կը գան, քըռ խանար կը ծախին:

Լաճն էլ կիլնը, ուր բերգյըրքիր կը պանա, կերթա:

Թուջըրքիր կըսին. - Տըղա՛, տիւ խիղճ իս, մընակ մ'երթա,
ըզքի տը պըռնին, սպանին:

Կըսը. - Չէ՛, իլահ, տ'երթամ իս:

Կերթա Դիարբանքը, Մերդինա խան կը տընը: Անու քանվոր կը գան: Չանու մալ ինչ կա, կը ծախը: Թի տաս վուսկու էր, կանը քըսան վուսկու, թի քըսան վուսկու էր, կանը քանսուն վուսկու: Էնու մալ, էնու փարեյ կը տա հինը: Անու դանֆթար կը տա հինը:

Կըսի. — Քու ընկիրքիրուն չըսիս, թի ֆըլան մարթ ընցկնան մալ ծախից ծը խանար:

Թուշըրքիր կը գան հեռճիվ, կըսին. — Գի հան լաճ իրը, մայան քանըվիր ը: Մըհա անու խոր քույաթ ի՞նչըխ տը տանք:

Լաճն էլ ուր դանֆթար թուշըրքիրուն շանք կը տա, կըսը. — Առե՛ք իմ դանֆթար, էրեշեցե՛ք:

Թուշըրքիր կըսին. — Ընցկնեմ ժամանակ կա, մինքն ընցկնեմ մալ չընք վանստըկիր: Դու մեկ, էրկու վանստըկիր իս: Մի մալն էլ տա՛ր, ծախը՛:

Կառնի ըգթուշըրքիր, կը պիրը Մերդինա խան, իրիք օր կը մընա, մարթ չի գան վար մալին վե:

Քանվոր կը գան:

— Տըղա՛, — կըսը, — չե՞ իս քի ըսըցը, թուշըրքիրուն մ՛ըսը՛:

Լաճն էլ կըսը. — Աստո՛ն սիրուն իլնը, իմ խանթը խանար նա մալն էլ ծախը:

Թուշըրքիրուն մալն էլ կը ծախը: Կը պաննան, քանըքեն կիլնին տուս:

Կըսը. — Տըղա՛, կերթե՛ք, մաչ տանտին քանըցե՛ք: Վար քու ճապ թիվին իրիշի, կանաչ քիշկըմ գի հանդե: Ըգքի տըփին՝ մի՛ գան տուս: Թըքին քու իրիս՝ խանթար մի՛ տա, ըգքի անին տուս էլ, էլըմ գանդտիկ արը, մըտի տուն:

Կիլնին, կը գան, մաչ տանտին, կը քանին:

Լաճն էլ կըսը՝ իս տ՛երթամ նա քիշկ, մընամ հանդե չուր անովոտուն, գամ:

Թուշար կըսը. — Մ՛երթա, հանդե վա՞վ գըտը, գա՞ղ ին, ի՞նչ ին:

Լաճ կերթա: Կերթա, քիշկին կը մատխըսնա, քիշկի մշակտիր իրիքն էլ կը գան, քանին հանճիվ դարբի: Կը մընա, բեհաշ կիլնը, տըքտըքուցըմ կը գան, կերթան կըխին՝ ըխթիյար մարթ մը գի վար կառուլին տըքտըքա:

Ըխթիյար կըսը. — Նա ի՞նչ գեշ խուտ էր՝ իրի միր տուն:

Կըսը. — Հասօր մեհվան միկիր միր տուն, ի՞նչըխ կը տը-

փինքը, ի՛նչըխ կանինքը, չընք կանա խանը տուս տընեն:

Կըսը. — Աստված իմ իրիքը լաճ առնը, նուր իմ իրիքը ռենջ-բար, ուր թըղիմ մեհվան էկավ, խասավ տուռ:

Էմէլ կը տանման, էն կանդար կը զարկին լաճուն, լաճ բեհաշ կիւնը: Կիւնը, էլըմ թարաջեն վե կիւնը վիր, գաղտիկ կը մտնը անու հողեն:

Կը տիսնը՝ իրիքը լաճ նստած խաց կուտին:

Կըսը. — Երաքը զըվռըցուցե՛ք, ուր լիւս չ'իմի վար նա կղոխ-մազ մարթու:

Խաց կուտին, ան խացը հավըլութկ կը տանին թալին հան-ճիվ շան, չըն իտար մեհվընին: Կը մընա, ան իրիքը լաճ մե-մեկ ուր հողեն կերթա: Խաւվոր կը մընա վար ուր կառուին: Կը տեսնա՝ կեսգյիշիրին պատ կը ճըղվը, էրկու խատ արար կը գան տուս, մե-մեկ փետըմ կառնին, կը գան դախ խաւվոր: Շատ կը զարկին խաւվորոջ, սիվ օցըմ պերնեն կը քեշին, սանջիւն քեշին, կը տանին վիր:

Խաւվոր կը միռնը հանդե:

Լաճն էլ կըսը. — Առանց պան ըսիլ ծի կը տըփեն, մըկա խերն էլ մեռավ, տ'ըլնին, ըզծը տը սպանին:

Էն էլ կիւնը, կը փախը:

Քաւոր կը գա հանճիվ:

Կըսը. — Տըղա՛, տեսա՞ր:

Լաճ կըսը. — Իս տեսա:

Կըսը. — Վաղ գընա՛, ինչ կը թալեք, վար աչ թիվին կիրիշ-կիս, սըվտակ քիշկըմ կա, կաստ արա դախ ան քիշկին, գընա՛:

Լաճ էկավ, թիւջըրքիրուն էսաց. — Դե՛, պարցե՛ք, յանք:

Պարցին, գացին: Գացին, տաշտը մեջ թալցըն:

Թիւջրին էսաց. — Դասօր իս տ'երթամ նա սըվտակ քիշկ:

Էսաց. — Տըղա՛, հէրեկն էր, տու գացիր, փախար, հասօր մ'երթա՛:

Լաճ էսաց. — Չէ՛, անկարելի յը, իս տ'երթամ:

Էլա՛վ, գընաց քիշկ: Քիշկը ռենջըրքիր իկին, ըզլաճ տա-րան, տարան անու խաւավքիր փուխիցին, համամլամիշ արին:

Մեկ տըքտըքիւցըմ կը գեր: Խաւվոր մարթըմ պառկեր էր վար կառուին, կը տըքտըքեր:

Կըսը. — Ի՞նչ անուշ խուտ էր՝ իրը միր տուն:

Կըսին. — Դասօր պարը մեհվա մ'իկիր միր տուն:

Կըսի. — Ի՞նչ անիմ, Աստված հառաճ իմ իրիքը լաճ առներ, նուր իմ իրիքը ռենջբար: Վախանամ՝ թողած քըռտիքը պաղիր ը վերա, մըսիր ը:

Լաճիր կէլնին, ըզմեհվան կը տանին մատ խալվոր: Լըխեֆ-դոշակ կը թալին, ըզմեհվան կը նստըցցին: Ձին էլ կը տանին, լիկ գարը, հարթ կանին հառճիվ: Շատ կաղըր էլ կը պըռնին մեհվընին:

Խալվոր կըսը. — Ըզծը տարե՛ք մատ մեհվան, իս անու ծեռ պըռնիմ, թողկաթ անիմ, նուր մեռնիմ:

Ըզխալվորու ծեռ, վուտ կը պըռնին, կը տանին մատ մեհվան:

Կըսը. — Մեհվա՛ն, տալ խազար պարուվ էկար:

Ծեռ կը տա, ըզմեհվընը ծեռ կը պըռնը, թողկաթ կանը, կըսը. — Մըկա կը մեռնիմ, թըխ մեռնիմ:

Կը պըռնին, ըզխեր էլմէլ կը տանին, տընին վար կառուին: Լաճիր մե-մեկ ուր հողեն կերթա:

Լաճն էլ կը նըստը, կեսգիշիր կիւնը: Պատ կը ճըղվը, կը տեսնա՝ էրկնուց խիտ լուս կը կաթը տակ, իրիքը խատ մարթ կը գան էրկնուց, մեկ սինի՛մ պըռնիր ծեռ, մեկ փեզգիր պըռնիր ծեռ, մեկն էլ պուռվալ պըռնիր ծեռ, իկին մատ խալվոր: Խալվորոջ սըր-պուրթին տըվին, հընդե մեկ շորան խալվորոջ պերնեն էլալ, են շորան տըրին մաչ սինուն, փեզգիր թալցին վերա, առըցին, գաճցին:

Էլալ ծեռ իտու, խալվոր մեռիր էր:

Էն էլ էսաց. — Նա աղեկութին ինչ արին խա ծիկ, նա մարթ ինչ մեռալ, վուա, տըսին՝ են սպանից: Ջահնամ, վուա՛, իս չըմ էրթա չուր խըլխուն: Իմ վիզ կը կըտրին, թըխ կըտրին:

Լաճիր իկին խըլխուն, տեսան՝ խեր միռիր:

Էսաց. — Միր խեր մեռիր, օղորմը ուր խոգուն, մինք մի մեհվան տընիքը ճամբխու, նուր մի խեր խուրինքը:

Էլան, գատա թըխըցին, տըրին խա մեհվընին: Մեհվան էլալ, ուր ծին խեծալ, իրը: Իրը կես ճամբխին, քալոր իրը հառճիվ:

Էսաց. — Տըղա՛, տեսա՛ր:

Էսաց. — Խա՛, վուա՛, էրկու քաշկն էլ գաճը, տեսա:

Էսաց. — Ուր տեսար, քյի կը պը անլութին էրա՛, քյի կը պը աղեկութին արա՛: Քյի խաբարըմ տը տամ, հալա քու սեռտ

չըմըմա, իմ սըռտին չըխանը, հաճա՛ իս տ'ըսիմ: Դիւ տ'երթաս տուն, քիւ խեր ըզքը տը փըսակը: Ինչ տիւ փըսակելուց պըռ-ծընիս, գա՛ս տուն վա՛ր տըռա՛ն տը մեռնիս:

Քա՛վոր կորսավ, էլա՛ն, ըզքա՛րվան պա՛րցին, իկին տուն:

Խեր էսաց. — Տըղա՛, ըզքի փըսակիմ:

Էսաց. — Տո՛ւ՛մ շինը, ըզտուն արա՛՛ երկու տըռնեն, խերյաթ-խանա պա՛ց, ֆա՛ղկիր-ֆըղկարա թըխ գա՛ն, ուտին, մի դիւղա անին:

Խեր անու խա՛մար խերյաթխանեն էպա՛ց:

Էսաց. — Լա՛ճ, դի՛րիս ըզքի տը փըսակիմ:

Լաճ էսաց. — Ըս տարը էլ մը՛ փըսակը, թըխ մըմա տարը մ'էլ:

Էսաց. — Ըզքի փըսակիմ, նոր մեռնիմ, իս էլ, քիւ մերն էլ ըխթիյարա՛ցիր ինք, ըզքիւ փըսակ տեսնամք, նուր մեռնինք:

Էլա՛ն, բա՛զըրկա՛նի մ'ախչիկ ուզըցին անու, խարիր վուսկու խա՛լավ կըտրիցին անու: Տըրին վա՛ր աթուռին, մուրուս կը կըն-դին, օր տը տանին փըսակ, տեսավ՝ երկու ֆըղկարա իկին մա՛չ ան քա՛ղքին: Մեկ կնիկը, մեկ՝ իրիկ, երկուսն էլ ախքա՛տ: Խացե կան կը գա՛ն: Երկուսն էլ չըփլախ ին, խա՛լավ չկա վերենքըյտիր:

Կնիկ իրկան էսաց. — Գըմա՛՛ խա՛րսնըսը տուն, բա՛լքը խացըմ տան, տիւ ուտիս:

Իրիկ տեսավ՝ փեսը մուրուս կը կընդին, փեսեն էլ էսաց. — Ըզծը թըղե՛ք, իս կայնիմ, նուր իմ մուրուս կընդեցեք:

Էլա՛վ, ուր խարիր վուսկու կեսը, խա՛լավքիր էտու ա՛տա՛ ֆըղկարին:

Էսաց. — Գըմա՛՛, Աստվաճ քի յի քըսմա՛թ արիր, ծը քըսմա՛թ չարիր:

Ֆըղկարեն իրը մա՛տ ուր կնիկ: Էսաց. — Կնի՛կ, իս գա՛ցի մա՛ փեսեն, դի՛ր տիւ գըմա՛՛ մա՛ խարս:

Խարսն էլ գի՛ հա՛մամը մեչ, խարիր վուսկու խա՛լավ տըրիր հա՛նդե, ուր տը խագըմը:

Ինչ խարսը աչկ ինկա՛վ դա՛խ ֆըղկարեն, խա՛լավ իտու անու, էսաց. — Ա՛ռ, Աստվաճ քի յի քըսմա՛թ արիր:

Ջիւյաթ տարան թիւղին, ըսիցին. — Քիւ լաճ ուր խա՛լավքիր իտու ախքըյտին:

Էսաց. — Իմ լաճ շա՛տ աղեկ արավ, դա՛ստ մ'էլ թըխ կարը, խագըմը, վըրե չըկա՞:

Զույսը տարան խարսը խոր, ըսիցին. — Քու ախչիկ զուր խալավքի իտու ախքըլտին:

Խեր էսաց. — Աղեն արավ, թախ դաստ մ' էլ կարը, խագընը հինի:

Էլան, երկու ֆըղկարա իրիկ, կնիկ իկին մեկտեղ, մեմեկի ըսըցին. «Նա մի խալավքի տըվըցին, մինք խագանք, միր աղեկութին ի՞նչ տ'իլնը նա փեսը, նա խարսը խիտ: Մե աղեկութին նա տ'իլնը՝ երկուսն էլ յանք, վար ժամտան շեմուց նըստինք: Մեկ ըսինք՝ Աստված, փեսը ումբըր հերկեն անիս, մեկ ըսինք՝ Աստված, խարսը ումբըր հերկեն անիս»:

Կիլնըն, երկուսն էլ կը գան, վար ժամտան շեմուց կը նըստին: Խարս, փեսեն կը պիրին ժամտուն, կը փըսակին:

Ան երկու ախքանքի ուց մեկն կըսի. — Աստված, տու փեսը ումբըր հերկեն անիս:

Մեկն կըսը. — Աստված, տու խարսը ումբըր հերկեն անիս:

Զուր փըսակ կիլնը: Երկուս ժամտընեն կը գան տուս, փեսեն չըգըխշը գա տուն:

Կըսը. — Աթուռ թալըցե՛ք, իս նըստին:

Մեկ սըհաթ կը նըստը մաչ բախչին:

Խեր կիլնի, կը գա հիտիվ լաճուն, կըսը. — Իլի՛, յանք տուն:

Խոր խաթր չըկուտըր, կիլնը վե լաճ, քավոր կը թալը, մեկ թիվ կը պըռնը, քավոր մ'էլ կը թալը, մեկէլ թիվ կը պըռնը:

Կըսի. — Տըղա՛, մը՛ վախանա, իլը՛ վե: Ասպածութին երկու ֆըղկարը ձեն ինկավ Աստծու ականջ: Խարիր մեկ տարը Աստված քու ումբըր հերկնցըցիր ը, Աստված քի ումբըր տվիր:

Էլան, իկին տուն:

Անունք խասան ուրինց մըրագ, տալը էլ՝ ծիր մըրագ:

